ԲՄԿ ՊՈՒՀ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի ինստիտուտի տնօրեն
Մ.Ա. Քարամյան
«04» հուլիսի 2025 թ.

ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
МИНИСТЕРСТВО НАУКИ И ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ РФ
РОССИЙСКО-АРМЯНСКИЙ (СЛАВОНСКИЙ) УНИВЕРСИТЕТ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ПРАВА

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Իրավունքի տեսության և Սահմանադրական իրավունքի

Հեղինակ(ներ)՝ ի.գ.թ., դոցենտ, Դալլաքյան Լ.Գ.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Իրավունքի աղբյուրները ՀՀ-ում

Մագիստրոսի կրթական ծրագիր՝ 042101.02.7 «Սահմանադրական իրավունք, պետության և իրավունքի տեսություն»

Դասիչ մասնագիտություն՝042101.00.7 Իրավագիտություն

1.1 Ներածություն

«Իրավունքի աղբյուրներ» առարկան ներառված է մագիստրոսական կրթական ծրագրի ուսումնական պլանի III-րդ կրթաբլոկի մեջ:

Իրավունքի աղբյուրները ունեն կարևորագյուն գործառութային նշանակություն պետության իրավական համակարգի արդյունավետ գործողության տեսանկյունից: Հետևաբար իրավական կարգավորման և իրավունքի իրացման արդյունավետության խնդրի տեսանկյունից ծագում է անհրաժեշտություն ավելի խորը և հանգամանորեն հետազոտել այնպիսի իրավական երևույթը ինչպիսին է իրավույքի աղբյուրը:

«Իրավունքի աղբյուրները ՀՀ-ում» դասընթացը ուսումնասիրում է «րավունքի աղբյուր» իրավական կատեգորիայի բնույթը և հիմնական առանձնահատկությունները, տարբեր տեսակի իրավունքի աղբյուրների առաջացման և զարգացման պատճառներն ու պատմական պայմանները: Դասընթացը ուսումնասիրելիս մագիստրանտները սովորում են ՀՀ-ի իրավունքի աղբյուրների համակարգի հետ մեկտեղ բացահայտել որոշակի իրավական ընտանիքներին բնորոշ իրավունքի աղբյուրների տեսակներն ու տարբերակիչ առանձնահատկությունները, վերլուծել դրանց նշանակությունը և դերը պետությունում գործող իրավական համակարգում, հետազոտվում են տարբեր պատմական և ժամանակակից իրավական ընտանիքներում իրավունքի աղբյուրների համակարգի ձևավորման և գործողության առանձնահատկությունները

1.2. Առարկայի ուսուցման համար ուսանողների գիտելիքների և հմտությունների սկզբմական մակարդակին ներկայացվող պահանջները

Առարկայի ուսումնասիրության հենքն է հանդիսանում բակալավրիատի կրթական ծրագրի ընթացքում ձեռք բերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները, ինչպես նաև «Պետության և իրավունքի տեսություն» առարկայի յուրացման արդյունքները:

1.3 Առարկայի նպատակն ու խնդիրները

Սույն ուսումնական դասընթացի նպատակն է մագիստրատուրայի ուսանողի մոտ ձևավորել հիմնարար տեսական գիտելիքներ ՀՀ իրավունքի աղբյուրների մասին, ինչպես նաև ձևավորել տարբեր իրավական համակարգերում և պատմական ժամանակաշրջաններում դրանց կիրառման վերաբերյալ պատկերացումները՝ համադրելով տեսական գիտելիքները և իրավական պրակտիկան:

Դասընթացի **խնդիրները** ներառում են՝

- իրավունքի հիմնական աղբյուրների մասին պատկերացումների ձևավորում և իրավական բնույթի սահմանում
- ՀՀ տարբեր տեսակի աղբյուրների առաջացման, գործողության և զարգացման պատճառների և պատմական պայմանների բացահայտում
- իրավունքի աղբյուրների համադրման վերլուծություն՝ կախված իրավական համակարգերի տեսակից և պատմական ժամանակաշրջանից
- իրավունքի տարբեր աղբյուրների հետ աշխատելու համապատասխան հմտությունների ձևավորում

1.4.Դասընթացի յուրացման վերջնարդյունքներին ներկայացվող պահանջները

Դասընթացը յուրացնելու արդյունքում մագիստրանտը **պետք է՝**

իմանա՝ գիտական գրականության մեջ առկա հիմնական տեսական դրույթները՝ իրավունքի աղբյուրի էության, տեսակների և հիմնական բովանդակային հատկանիշների մասին: Պատկերացում ունենա իրավական համակարգի արդի խնդիրների մասին և դրանց վերաբերյալ ներկայացնել իր փաստարկված դիրքորոշումը:

կարողանա՝ կողմնորոշվել ՀՀ տարբեր տեսակի իրավունքի աղբյուրներում, բացահայտել տարբեր պատմական և ժամանակակից իրավական համակարգերում իրավունքի աղբյուրների համակարգի կառուցվածքի և գործողության առանձնահատկությունները, իրավունքի մեկնաբանման կանոնների կիրառմամբ վերլուծել և պարզաբանել հայկական իրավունքի աղբյուրները:

տիրապետի՝ իրավունքի տարբեր աղբյուրների հետ աշխատելու և վերլուծություն իրականացնելու հմտություններով իր հետագա մասնագիտական գործունեության արդյունավետության համար:

1.5. Դասընթացի աշխատատարությունը ըստ ակադեմիական ժամերի և կրեդիտների, ամփոփիչ ստուգման ձևը

3 կրեդիտ; 108 ակադեմիական ժամ; ստուգարք գն.

1.6 Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

Ուսումնական աշխատանքների տեսակները	Ամբողջը, ակ. ժամ.	Բաշխում ըստ կիսամյակների					
		1 Կիս.	2 Կիս.	3 Կիս.	4 կիս.	5 Կիս.	6 Կիս.
1	2	3	4	5	6	7	8
1.Ըստ կիսամյակի ընդհանուր դասընթացի ուսուցման ծանրաբեռնվածությունը	108			108			
1.1. Լսարանային պարապմունքներ:	32			32			
1.1.1.Դասախոսություններ	16			16			
1.1.2.Սեմինարներ	16			16			
1.2. Ինքնուրույն աշխատանք	49			49			
1.3. Հսկ. ժամեր	27			27			
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)							

2. Առարկայի բովանդակությունը

2.1 Թեմատիկ պլան (Առարկայի ծավալի բաշխում ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների)

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը (ակ. ժամեր)	Լեկցիաներ (ակ. ժամեր)	Պրակտիկ պարապմունքներ (ակ. ժամեր)	Ինքնուրույն աշխատանք
1	2	3	5	6
Թեմա 1. Իրավունքի աղբյուրների ընդհանուր տեսություն	10	1	1	8

Թեմա 2. Իրավական սովորույթը որպես իրավունքի աղբյուր	**12**	**2**	**2**	**8**
Թեմա 3. Իրավական դոկտրինը որպես իրավունքի աղբյուր	**14**	**4**	**2**	**8**
Թեմա 4. Նորմատիվ իրավական ակտ որպես իրավունքի աղբյուր	**17**	**4**	**4**	**9**
Թեմա 5. Նորմատիվ պայմանագիր որպես իրավունքի աղբյուր	**12**	**2**	**2**	**8**
Թեմա 6. Դատական նախադեպը որպես իրավունքի աղբյուր	**16**	**4**	**4**	**8**
Ընդհանուր	81	**16**	**16**	49

3. Առարկայի բաժինների և թեմաների բովանդակությունը

Թեմա 1. Իրավունքի աղբյուրների ընդհանուր տեսություն

Իրավունքի աղբյուր հասկացության սահմանման հինախնդիրը. տարբեր մոտեցումներ: Իրավունքի աղբյուրը լեգիստական իրավաընկալման հայեցակարգի տեսանկյունից: Իրավունքի աղբյուրը բնական իրավունքի տեսության տեսանկյունից: Իրավունքի ձև և իրավունքի աղբյուր հասկացությունների համադրությունը: Իավունքի աղբյուրը ֆորմալ-իրավական, նյութական և գաղափարական իմաստներով: Իրավունքի հուշարձանները որպես իրավունքի աղբյուրներ պատմաիրավական իմաստով: Ռոմանագերմանական իրավունքի աղբյուրների հիմնական տեսակները և դրանց դասակարգման չափանիշները. Առաջնային և երկրորդական աղբյուրներ: ՀՀ իրավունքի աղբյուրների հիերարխիայի հիմնախնդիրները:

Թեմա 2 Իրավական սովորույթը որպես իրավունքի աղբյուր

Իրավական սովորույթը՝ որպես իրավունքի պատմականորեն կայուն աղբյուր: Սովորութային իրավունքի էվոլյուցիան. ձևավորում, զարգացում և ժամանակակից իրողություններ: Սոցիոլոգիական հայեցակարգը և պոզիտիվիստական տեսությունը իրավական սովորույթի որպես իրավունքի աղբյուրի դերի և տեղի մասին:

Ավանդույթների և իրավական սովորույթների հարաբերակցությունը: Իրավական սովորույթների և կրոնական և բարոյական նորմերի հարաբերակցությունը: Իրավական սովորույթների սանկցիայի տեսակները՝ իրավաստեղծ և իրավակիրառ սանկցավորման առանձնահատկությունները: Իրավական սովորույթի դերը ռոմանագերմանական իրավական համակարգում: Իրավական սովորույթները ընդհանուր իրավունքի (common law) համակարգում: Սահմանադրական սովորույթները: Իրավական սովորույթի տեղն ու առանձնահատկությունները ՀՀ-ում:

Թեմա 3. Իրավական դոկտրինը որպես իրավունքի աղբյուր

Իրավական դոկտրին. իրավական դոկտրինի հասկացությունը առանձնահատկությունները և նշանակությունը իրավունքի աղբյուրների համակարգում: Իրավական դոկտրինը Հին Հռոմում, հռոմեական իրավունքի դոկտրինալ բնույթը: «Օրենք իրավաբանների մեջբերման մասին» 426 թիվ մ.թ.ա: Իրավաբանական դոկտրինի դերը ռոմանոգերմանական իրավական համակարգի ձևավորման գործընթացում. Իրավական դոկտրինի սանկցավորման մեթոդները ժամանակակից իրավական համակարգում.

Իրավական դոկտրինը որպես իսլամական իրավունքի աղբյուր. Մահմեդական իրավաբանները և «իջթիհադի ազատության» սկզբունքը. Ֆիքխ.

Իրավական դոկտրինը ընդհանուր իրավունքի (Common law) համակարգում: Անգլիացի հեղինակավոր գիտնականների տրակտատների կիրառումը դատական պրակտիկայում.

Իրավաբանական դոկտրինի դերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում: Իրավական դոկտրինի կիրառումը ՀՀ դատարանների կողմից.

Թեմա 4. Նորմատիվ իրավական ակտ որպես իրավունքի աղբյուր

Նորմատիվ իրավական ակտի՝ որպես իրավունքի աղբյուրի ձևավորման և կայացման պատմությունը ռոմանագերմանական իրավական համակարգում: Նորմատիվ իրավական ակտի դերը ընդհանուր իրավունքի համակարգում.

Նորմատիվ իրավական ակտի հիմնական տարբերակիչ հատկանիշները: Նորմատիվ իրավական ակտերի դասակարգման առանձնահատկությունները Նորմատիվ իրավական ակտերի ատիպիկ տեսակները Նորմատիվ իրավական ակտի և ներքին/լոկալ/ ակտի հարաբերակցությունը Հայաստանի Հանրապետության դոկտրինում և օրենսդրությունում: Նորմատիվ իրավական ակտի և in rem ակտի հարաբերակցությունը

Օրենքը իրավունքի աղբյուրների ժամանակակից համակարգում: Օրենքի հասկացությունը, հատկանիշները, տեսակները. սահմանադրական օրենքներ, կոդիֆիկացված օրենքներ, օրգանական օրենքներ: Սահմանադրությունը որպես իրավաքաղաքական ակտ: Բարձրագույն գործադիր մարմինների կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակում օրենսդրական ակտերի ընդունման հիմնախնդիրները: Ռեգլամենտար ակտեր արտասահմանյան իրավաստեղծ պրակտիկայում:

Ենթաօրենսդրական ակտի հասկացությունը և բնութագիրը: Ենթաօրենսդրական ակտի դասակարգումը: Տեղական կառավարման մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերը: Հայաստանի Հանրապետությունում ենթաօրենսդրական ակտերի հիերարխիայի հիմնախնդիրը: Պաշտոնական նորմատիվ մեկնաբանման ակտերի առանձնահատկությունները:

Թեմա 5. Նորմատիվ պայմանագիր որպես իրավունքի աղբյուր

Նորմատիվ պայմանագրի՝ որպես իրավունքի աղբյուրի հատկանիշները և առանձնահատկությունները: Պայմանագրային իրավաստեղծ գործունեություն: Նորմատիվ իրավական ակտի և նորմատիվ պայմանագրի հարաբերակցության հիմնախնդիրները իրավական դոկտրինում և ՀՀ օրենսդրությունում:

Նորմատիվ պայմանագրերի դասակարգման խնդիրները դոկտրինում: Միջազգային պայմանագիրը որպես արտաքին նորմատիվ պայմանագիր, միջազգային պայմանագրերի տեսակները ըստ իրավաբանական ուժի ՀՀ-յում: Դուալիստական և մոնիստական մոտեցումները միջազգային պայմանագրերի և ներպետական իրավունքի հարաբերակցության վերաբերյալ: Միջազգային իրավունքի ընդհանուր ճանաչված նորմերը՝ որպես Հայաստանի իրավական համակարգի բաղկացուցիչ մաս:

Ներքին նորմատիվ պայմանագիր՝ վարչական, սահմանադրական և կոլեկտիվ (աշխատանքային) պայմանագրեր: Ներքին պայմանագրերի տեսակները Հայաստանի Հանրապետությունում:

Թեմա 6. Դատական նախադեպը որպես իրավունքի աղբյուր

Դատական պրակտիկայի և դատական նախադեպի հարաբերակցության հիմնախնդիրները. Դատական նախադեպի մոդելը ռոմանագերմանական իրավական համակարգում: Jurisprudence constante սկզբունքը եվրոպական դատական պրակտիկայում: Դատական նախադեպի անգլո-սաքսոնական մոդելը: Stare decisis. սկզբունքը: Ratio decidendi և obiter dictum: Դատական նախադեպերի տեսակները՝ կրեատիվ նախադեպ և մեկնաբանական նախադեպ: Օրենքի/ստատուտի և նախադեպի հարաբերակցությունը ընդհանուր իրավունքի համակարգում:

Դատական նախադեպը Հայաստանի Հանրապետությունում. ձևավորման առանձնահատկությունները և զարգացման պատմությունը: Բարձր դատարանների «իրավական դիրքորոշումը»: Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ և Սահմանադրական դատարանների իրավական դիրքորոշումների իրավական բնույթը:

4 Գիտելիքների գնահատման և ստուգման համար հարցաշար/ առաջադրանքների համար ցանկ

1. Ինչպե՞ս են փոխկապակցված իրավունքի ձևն ու իրավունքի աղբյուր հասկացությունները
2. Բացատրե՛ք իրավունքի աղբյուրը ֆորմալ-իրավական, նյութական և գաղափարական իմաստներով
3. Ներկայացրեք ե՛ք ՀՀ իրավունքի աղբյուրների հիերարխիայի հիմնախնդիրները:
4. Ներկայացրե՛ք իրավական սովորույթը՝ որպես իրավունքի պատմականորեն կայուն աղբյուրի էվոլյուցիան (ձևավորում, զարգացում և ժամանակակից իրողություններ
5. Ինչպե՞ս են հարաբերակցում ավանդույթները և իրավական սովորույթները, նաև իրավական սովորույթները և կրոնական ու բարոյական նորմերը:
6. Բնութագրե՛ք իրավական սովորույթների իրավաստեղծ և իրավակիրառ սանկցիավորման առանձնահատկությունները:

7. Ի՞նչ են սահմանադրական սովորույթները և ո՞րն է դրանց տեղն ու առանձնահատկությունները իրավական համակարգերում
8. Սահմանե՛ք իրավական դոկտրինի հասկացությունը, նրա առանձնահատկությունները և նշանակությունը իրավունքի աղբյուրների համակարգում:
9. Ի՞նչ դեր է խաղացել իրավական դոկտրինը Հին Հռոմում
10. Բացատրե՛ք իրավաբանական դոկտրինի դերը ռոմանագերմանական իրավական համակարգի ձևավորման գործընթացում
11. Ո՞րն է իրավաբանական դոկտրինի դերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում և ինչպե՞ս է այն կիրառվում ՀՀ դատարանների կողմից:
12. Թվարկե՛ք նորմատիվ իրավական ակտի հիմնական տարբերակիչ հատկանիշները և նրա դասակարգման առանձնահատկությունները
13. Որոնք՞ են նորմատիվ իրավական ակտերի ատիպիկ տեսակները
14. Ներկայացրե՛ք նորմատիվ իրավական ակտի և ներքին (լոկալ) ակտի հարաբերակցությունը ՀՀ դոկտրինում և օրենսդրությունում:
15. Օրենքի հասկացությունը, նրա հատկանիշները և տեսակները (սահմանադրական, կոդիֆիկացված, օրգանական օրենքներ
16. Ի՞նչ է ենթաօրենսդրական ակտը, ներիայացրե՛ք ՀՀ-ում ենթաօրենսդրական ակտերի հիերարխիայի հիմնախնդիրը:
17. Ներկայացրե՛ք նորմատիվ պայմանագրի՝ որպես իրավունքի աղբյուրի հատկանիշները և առանձնահատկությունները
18. Քննարկե՛ք նորմատիվ իրավական ակտի և նորմատիվ պայմանագրի հարաբերակցության հիմնախնդիրները իրավական դոկտրինում և ՀՀ օրենսդրությունում
19. Բացատրե՛ք դուալիստական և մոնիստական մոտեցումները միջազգային պայմանագրերի և ներպետական իրավունքի հարաբերակցության վերաբերյալ
20. Ի՞նչ են ներքին նորմատիվ պայմանագրերը (վարչական, սահմանադրական և կոլեկտիվ/աշխատանքային): Թվարկե՛ք ներքին պայմանագրերի տեսակները Հայաստանի Հանրապետությունում
21. Ներկայացրե՛ք դատական նախադեպի անգլո-սաքսոնական մոդելը: Բացատրե՛ք Stare decisis սկզբունքը, Ratio decidendi և Obiter dictum հասկացությունները
22. Բնութագրե՛ք դատական նախադեպի մոդելը ռոմանագերմանական իրավական համակարգում (Jurisprudence constante սկզբունքը)
23. Դատական նախադեպերի տեսակները (կրեատիվ նախադեպ և մեկնաբանական նախադեպ
24. Բարձր դատարանների «իրավական դիրքորոշումը». բնութագրե՛ք Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ և Սահմանադրական դատարանների իրավական դիրքորոշումների իրավական բնույթը:

5. Տեսական բլոկ

Գրականության ցանկ

Պարտադիր գրականություն

1. Истоки и источники права: генезис и эволюция: монография / под ред. Р. А. Ромашова Издательство:Алетейя, 2023
2. Шуберт, Т. Э. Доктрина, законотворчество, судебная практика: вопросы взаимовлияния : монография / Т.Э. Шуберт. — Москва : ИНФРА-М, 2022.
3. Марченко, М. Н. Источники права : учеб. пособие / М. Н. Марченко. — 2-е изд., перераб. — М. : Норма : ИНФРА-М, 2019.
4. Дробышевский, С. А. Формальные источники права : монография / С. А. Дробышсвскии. Т. Н. Данцсва. — М. : Норма : ИНФРА-М, 2018.
5. Марченко М.Н. Судебное правотворчество и судейское право [Электронный ресурс]: учебное пособие. - 2-е изд., перераб. и доп. – Москва: Проспект, 2017.
6. Богдановская И.Ю. Прецедентное право. Москва., 2018.
7. Царегородская Е.В. Правовой обычай: сущность и механизм действия: Дис. ... канд. юрид. наук. СПб., 2004
8. Богдановская И.Ю. Правовая доктрина в «общем праве». // Современное право. - 2012. - №5.
9. Даллакян Л.Г. Проблемы применения правового обычая в контексте доктрины «молчания законодателя» (с позиций российской юридической науки)//Вестн. Том. гос. ун-та. 2023. №487
10. Даллакян Л.Г, Гамбарян А.С. Проблемы законов ненормативного характера: вопросы теории и практики//“Советник юриста”, Москва.; 2017, № 12
11. Даллакян Л.Г. Дискуссионные вопросы нормативности некоторых видов правовых актов/ Двенадцатая Годичная научная конференция. Сборник научных статей: Социально-гуманитарные науки. Часть I. – Ер.: Изд-во РАУ, 2018
12. Даллакян Л.Г. Судебный прецедент в англо-саксонской и романо-германской правовых семьях/ Юридическая энциклопедия. Ер.: Российско-Армянский университет, 2017

13. Даллакян Л.Г. Внедрение судебного прецедента в правовую систему РА/ Тезисы материалов международного форума аспирантов и молодых ученых “Современная наука: тенденции развития, проблемы и перспективы”, посвященного 10-летию аспирантуры РАУ. Изд. РАУ, 2013
14. Даллакян Л.Г Анализ различных подходов к юридической природе интерпретационных актов судебных органов /Девятая Годичная научная конференция. Сборник научных статей: Социально-гуманитарные науки. Часть I. – Ер.: Изд-во РАУ, 2015
15. Даллакян Л.Г. Проблемы классификации актов, принимаемых Генеральным прокурором РА // Сборник научных статей: Социально-гуманитарные науки, том 1. Изд РАУ, 2009
16. Даллакян Л.Г. Природа правовых позиций Кассационного суда РА/ Пятая Годичная научная конференция Сборник научных статей: Социально-гуманитарные науки. Часть 2, Изд. РАУ, 2011
17. Даллакян Л.Г., Гамбарян А.С. Нормативный договор в системе источников права //“Դատական իշխանություն” N7 2009,7/120
18. Լ.Դալլաքյան, Ա.Ղամբարյան Իրավաբան-գիտնականների իրավունքի կիրառումը դատական վարույթի ընթացքում. իրավական կարգավորման հեռանկարները// “Դատական իշխանություն” N6 (204) 2016 (հունիս)
19. Ա.Ղամբարյան Ենթաօրենսդրական ակտեր ընդունելու լիազորություն ունեցող մարմինների նույնականացումը ՀՀ-ում// Օրինականություն, № 133 2023

Լրացուցիչ գրականություն

1. Իրավունքի ընդհանուր տեսության հիմնախնդիրները։ Ուսումնական ձեռնարկ։ Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան։ Երևան,, 2024
2. Նորմատիվ բնույթի ներքին լոկալ իրավական ակտերը և դատական վերահսկողության հարցերը, Ռ. Խանդանյան: Երևան, 2024
3. Օհանյան Վ. Ա. Իրավունքի աղբյուրների հիմնախնդիրները ՀՀ-ում/ Մենագրություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2013 թ.

4. Источниковедение: учеб. пособие / И.Н. Данилевский, Д.А. Добровольский, Р.Б. Казаков и др. ; отв. ред. М.Ф. Румянцева. М., 2015
5. Классификации источников права Н.В. Сильченко// Актуальные проблемы теории и истории правовой системы общества: сб.науч.тр. /отв. ред. проф. В.Н.Карташов; Яросл. гос. ун – т. – Ярославль: ЯрГУ, 2013. – Вып. 12.
6. Гарашко А. Ю. Теоретические аспекты сущности источников права // Законность и правопорядок в современном обществе. 2011. №4.

Առարկայի նորմատիվ հիմքը

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված փոփոխություններով)
2. Հայաստանի Հանրապետության օրենք «Նորմատիվ իրավական ակտերի մասին» (ընդունված 21.03.2018)
3. Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք «ՀՀ Դատական օրենսգիրք» (ընդունված 07.02.2018)
4. Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք «Սահմանադրական դատարանի մասին» (ընդունված17.01.2018)
5. Հայաստանի Հանրապետության օրենք «Միջազգային պայմանագրերի մասին» (ընդունված 23.03.2018)

Ինտերնետային ռեսուրսներ

1. ՀՀ օրենսդրության տեղեկատվական որոնողական համակարգ https://arlis.am
2. ՀՀ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք https://e-draft.am
3. «Իրտեկ» իրավական տեղեկատվական համակարգ http://www.irtek.am
4. http://www.concourt.am

5. http:/www.parliament.am:

6. Գործնական բլոկ

Սեմինարների և պրակտիկ պարապմունքների պլան:

Պարապմունքի տեսակ՝ հարցերի քննարկում և խնդիրների լուծում:

Ստուգման ձևը՝ բանավոր և գրավոր հարցում:

Թեմա 1. Իրավունքի աղբյուրների ընդհանուր տեսություն

Հարցեր քննարկման համար.

1. Իավունքի աղբյուրը ֆորմալ-իրավական, նյութական և գաղափարական իմաստներով
2. Իրավունքի աղբյուրի հասկացությունը տարբեր իրավաընկալման հայեցակարգերի տեսանկյունից
3. Իրավունքի աղբյուրների հիերարխիայի հիմնախնդիրները ռոմանագերմանական համակարգում և Հայաստանի Հանրախետությունում

Թեմա 2 Իրավական սովորույթը որպես իրավունքի աղբյուր

Հարցեր քննարկման համար.

1. Սովորութային իրավունքի էվոլյուցիան. ձևավորում, զարգացում և ժամանակակից իրողությունները
2. Իրավական սովորույթի տեղն ու առանձնահատկությունները ՀՀ-ում:
3. Իրավական սովորույթների սանկցավորման տեսակները
4. Իրավական սովորույթի դերը ռոմանագերմանական, ընդհանուր իրավունքի և կրոնական իրավունքի համակարգերում:

Թեմա 3. Իրավական դոկտրինը որպես իրավունքի աղբյուր

Հարցեր քննարկման համար.

1. Իրավական դոկտրինի հասկացությունը, առանձնահատկությունները և նշանակությունը իրավունքի աղբյուրների համակարգում:
2. Իրավական դոկտրինը Հին Հռոմում, հռոմեական իրավունքի դոկտրինալ բնույթը
3. Իրավաբանական դոկտրինի դերը ռոմանոգերմանական իրավական համակարգի ձևավորման գործընթացում..
4. Իրավական դոկտրինը որպես իսլամական իրավունքի աղբյուր.
5. Իրավական դոկտրինը ընդհանուր իրավունքի (common law) համակարգում:
6. Իրավաբանական դոկտրինի դերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում: Իրավական դոկտրինի կիրառումը ՀՀ դատարանների կողմից

Թեմա 4. Նորմատիվ իրավական ակտ որպես իրավունքի աղբյուր

Հարցեր քննարկման համար.

1. Նորմատիվ իրավական ակտի՝ որպես իրավունքի աղբյուրի ձևավորման և կայացման պատմությունը ռոմանագերմանական և ընդհանուր իրավունքի իրավական համակարգերում
2. Նորմատիվ իրավական ակտի և ներքին/լոկալ/ ակտի հարաբերակցությունը Հայաստանի Հանրապետության դոկտրինում և օրենսդրությունում:
1. Օրենքը իրավունքի աղբյուրների ժամանակակից համակարգում: Օրենքի հասկացությունը, հատկանիշները, տեսակները. սահմանադրական օրենքներ, կոդիֆիկացված օրենքներ, օրգանական օրենքներ:
2. Բարձրագույն գործադիր մարմինների կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակում օրենսդրական ակտերի ընդունման հիմնախնդիրները:
3. Ենթաօրենսդրական ակտի առանձնահատկությունը և դասակարգումը: Տեղական կառավարման մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերը:
4. Հայաստանի Հանրապետությունում ենթաօրենսդրական ակտերի հիերարխիայի հիմնախնդիրը:
5. Պաշտոնական նորմատիվ մեկնաբանման ակտերի առանձնահատկությունները:

<u>Թեմա 6</u>. Դատական նախադեպը որպես իրավունքի աղբյուր

Հարցեր քննարկման համար.

1. Դատական նախադեպի հիմնական հատկանիշները
2. Jurisprudence constante սկզբունքի և Stare decisis տարբերակումը
3. Դատական պրակտիկայի և դատական նախադեպի հարաբերակցության
4. Դատական նախադեպը Հայաստանի Հանրապետությունում
5. Վճռաբեկ և Սահմանադրական դատարանների իրավական դիրքորոշումների իրավական բնույթը

7. Մեթոդական բլոկ

Դասավանդման մեթոդաբանությունը

Դասընթացի ուսումնական ծրագիրը ներառում է դասախոսություններ, սեմինարներ, ինչպես նաև ուսանողների ինքնուրույն աշխատանք:

√ Դասընթացի հիմնական տեսական նյութը ներկայացվում է *դասախոսությունների ընթացքում*: Միջանկյալ/վերջնական ատեստավորմանը որակյալ պատրաստվելու համար մագիստրանտները դասախոսությունների ընթացքում պետք գրի առնեն, կարևոր դիտարկումները և նշումները, դասախոսի կողմից հնչեցվող ձևակերպումների ու կատեգորիաների հիմնական իմաստը բաց չթողնելու, ինչպես նաև դասախոսությունների ընթացքում արված եզրահանգումներն ու գործնական խորհուրդները արձանագրելու համար:

√ *Սեմինարական պարապմունքների* ընթացքում կատարվում է դասախոսության ժամանակ տրամադրված նյութերի մշակում, ավելի խորը և մանրամասն ուսումնասիրություն: Այսպես, մագիստրանտները պետք է կատարեն որոշակի առաջադրանքներ՝ հիմնվելով ընթացիկ և նախորդ դասընթացների թեմաների վրա; գնահատվում են մագիստրանտների կողմից նյութը վերլուծելու հմտությունները, թեման հետևողականորեն ներկայացնելու և սեփական դիրքորոշումը ներկայացնելու կարողությունը:

√ *Ինքնուրույն աշխատանքի* ընթացքում մագիստրանտը լրացուցիչ ուսումնասիրում է դասընթացի նյութերը՝ հիմնվելով ուսումնական ծրագրի, ինչպես նաև տարբեր աղբյուրների և գրականության ցանկի վրա: Նա պետք է հատուկ ուշադրություն դարձնի դասընթացների թեմաներին վերաբերող գործնական խնդիրների լուծման հմտությունների զարգացմանը:

√ *Վերջնական ատեստավորումը /մոդուլը* անցկացվում է գրավոր/ բանավոր ողջ դասընթացի նյութերի ընդհանրացման և վերստուգման ձևով: Վերջնական

ատեստավորմանը նախապատրաստվելիս մագիստրանտը պետք է կրկնի երկամսյա դասընթացում ընդգրկված ամբողջ նյութը:

8. Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները:

.

Ընթացիկ ատեստավորումն իրականացվում է ուսանողների հարցումների և սեմինարների/գործնական պարապմունքներում նրանց կողմից կատարած աշխատանքի հիման վրա:

Դասընթացի սեմինարային պարապմունքներն անցկացվում են ընթացիկ թեմայի շուրջ անհատական բանավոր հարցման ձևով՝ ըստ դասընթացի ուսումնական պլանի:

Դասախոսի կողմից տրամադրված նյութերի հիման վրա պատրաստված պատասխաններից հետո, մագիստրոսը ներկայացնում է իր կողմից ուսումնասիրված տարբեր աղբյուրների նյութերը, ինչի շնորհիվ երևան է հանվում և գնահատվում է մագիստրանտի ինքնուրույն աշխատանքի ծավալն ու որակը:

Ընթացիկ թեմայի շուրջ հիմնական պատասխանից հետո մագիստրանտին տրվում են լրացուցիչ հարցեր դասընթացի նախորդ թեմաներից՝ ուսանողի գիտելիքների լիարժեքությունը և բազմակողմանիությունը գնահատելու նպատակով:

Սեմինարական պարապունքները կարող է անցկացվել գրավոր ձևով՝ թեմայի վերաբերյալ թեստերի, կամ առաջադրանքների միջոցով: Սեմինարի պարապմունքների ընթացքում մագիստրանտներին կարող են տրվել նաև գործնական խնդիրներ առարկայի հիմնական թեմաներով, որից հետո տեղի է ունենում խնդիրների լուծման տարբերակների ընդհանուր քննարկում:

Վերջնական ատեստավորումը /մոդուլը անցկացվում է գրավոր, ողջ դասընթացի նյութերի ընդհանրացման և վերստուգման ձևով: Ստուգարքը ներառում է հարցեր և առաջադրանքներ (երկու կամ երեք) երկամսյա մոդուլի թեմաներից, գրավոր առաջադրանքների շրջանակում կարող են տրվել նաև գործնական խնդիրներ առարկայի հիմնական թեմաներով: Ատեստավորումը կարող է իրականացվել նաև բանավոր: Բանավոր հարցում անցկացնելու ժամանակ մագիստրանտին տրվում են հարցեր ամբողջ դասընթացի թեմաների ցանկից:

Գնահատման չափանիշները՝ պատասխանների ճշգրտությունը և պատճառաբանվածությունը, թեմաների ըմբռնման խորությունը, նյութի շարադրման տրամաբանությունը և հետևողականությունը, վերլուծական հմտությունները, օգտագործված գրականության և աղբյուրների որակը, ինչպես նաև հղումների կորեկտությունը: